

2020թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզում 2020 թվականին կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրերի համաձայն համակարգող խորհրդների կազմերը ձևավորելու նպատակով՝

հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի N 25-Ն հրամանը ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմը համագործակցության է հրավիրում մարզի տարածքում գործող պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական պաշտպանության բնագավառում գործող պետական և համայնքային, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություններին /ներառյալ՝ ՀԿ-ներ, ոչ առևտրային կազմակերպություններ/, ինչպես նաև ֆիզիկական անձանց:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջների են.

1. սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ.
2. սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում:

Հայտագրման համար կարող եք դիմել մինչև ս/թ հունիսի 19-ը:

Սույն հայտարարությանը կից ներկայացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի N 25-Ն և 2016 թվականի հունիսի 14-ի N 64-Ն հրամանները տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի օրինակելի ձևի և համակարգող խորհուրդ ձևավորելու մասին: